

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ԹԵՍՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Ընդհանուր ժողով.—Ներկայ տարուայ մարտի 30-ին, Հասարակական գրադարանի դահլիճում տեղի ունեցաւ Հայոց Ազգագրական Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը: Ընկերութեան Թիֆլիսաբնակ 99 անդամից ներկայ էին 42-ը:

Նախագահ ընտրուեց պ. Ա. Քալանթար, քարտուղար՝ պ. Գ. Լեոնեան: Նախկին ժողովի արձանագրութիւնը կարդալուց և հաստատելուց յետ՝ պ. Ե. Լալայեան ղեկուցեց ընկերութեան անցեալ տարի ու կիսուայ գործունէութեան մասին, որից քաղուածօրէն յառաջ ենք բերում հետեւեալը: Ընկերութեան գործունէութիւնը մեծ մասամբ կենդրոնացած է եղել իւր Ազգագրական Հանդիսի խմբագրութեան և հրատարակութեան վրայ, սակայն և՛ այնպէս՝ որովհետև ղեկիցիտը շատ մեծ է եղել, ուստի փոխանակ տարեկան չորս զբօժ՝ հրատարակել է երկու գիրք, իսկ ներկայ տարուայ համար որոշել է մասամբ բաժանորդների թիւը աւելացնելով, մասամբ էլ Հանդիսի ծաւալը փոքրացնելով հրատարակել չորս գիրք: Միջոցներ չլինելու պատճառով՝ անցեալ տարի ևս չէ կարողացել յատուկ գիտական արշաւախումբ կազմել:

Միևնոյն ժամանակ ի նկատ առնելով, որ Ազգագրական Հանդիսի ծաւալի փոքրութեան պատճառով հնարաւորութիւն չի լինում բանահիւսութեան վերաբերեալ նիւթեր բաւականաչափ հրատարակելու, ի նկատ առնելով, որ ընկերութեանս ճիւղերը կարող են ամենայն հեշտութեամբ և մանաւանդ՝ ամենայն յաջողութեամբ հաւաքել, և բարձրօրէն տեսակէտից վերաստուգել ու հրատարակել իւրաքանչիւրը իւր շրջանի բանահիւսութեան վերաբերեալ նիւթերը, որոշել է խնդրել իւր ճիւղերին, որ իւրաքանչիւրը տարէնը մի կամ մի քանի զբօնյկ հրատարակէ իւր շրջանի բանահիւսութեան վերաբերեալ: Եւ որպէսզի սրանք պատահական կերպարանք չկրեն, և բոլորն էլ միևնոյն բովից անցած լինեն, որոշել է խնդրել ճիւղերի վարչութիւններին, որ իւրենք քննելուց յետ՝ ուղարկեն կենդրոնի խմբագրական Մասնագործովին՝ վերստին քննելու, որից յետոյ միայն հրատարակեն:

Այս գրքոյկներն շարքը կրելու է միևնոյն խորագիրը և պահպանելու է միևնոյն գիրքը, բաղկանալով 1—5 տպագրական թերթից:

Ազգագրական Ընկերութեան նպատակը եղել է նաև տարածել մարդաբանական գիտութիւնները հայ հասարակութեան մէջ, այս պատճառով և՛ թէև սկսել է «Մարդաբանական Գրադարան» խորագրով մի հրատարակութիւն, սակայն մինչև այժմ միայն հինգ փոքրիկ գրքոյկներ է հրատարակել: Անշուշտ ընկերութիւնը շարունակելու է այս հրատարակութիւնը՝ երբ նիւթական միջոցները ներեն:

Ո՛չ միայն գրքերով, այլև ուղղակի գիտողութեամբ մեր երկիրն ու հնութիւններն հայ հասարակութեան ծանօթացնելու նըպատակով՝ Ընկերութիւնը որոշել էր խմբաբաշտ կազմել դէպի Անի, սակայն այնտեղ ոչ մի յարմարութիւն չնկատելով՝ որոշել է մի ապաստանարան և մի կամուրջ շինել Ղոշավանքում, սակայն դեռ ևս չի կարողացել իրագործել:

Խմբագրական Մասնաժողովը որոշել է նաև ամսէնը երկու կամ զոնէ մի անդամ գիտական գրոյցներ կազմել միայն իւր անդամների և տարին մի քանի դասախօսութիւններ՝ հասարակութեան համար: Առաջին որոշումը դեռ ևս չի իրագործել՝ յարմար բնակարան չունենալու պատճառով, իսկ երկրորդը՝ իրագործել է փոքր չափով, կազմակերպելով միայն երեք դասախօսութիւն:

Ընկերութիւնը ՚ի նկատ առնելով այն ահագին նշանակութիւնը, որ ազգագրական-հնագիտական թանգարանը ունի թէ մի ազգի ինքնուրոյն զարգացումը և թէ ընդհանրապէս մարդկութեան էվոլյուցիան բնորոշելու համար.

՚ի նկատ առնելով՝ որ համաշխարհային քաղաքակրթութեան շնորհիւ հայի առանձնայատուկ կեանքը, նրա ազգային զգեստները, պարագմունքի գործիքները, նիստ ու կացը, սովորութիւնները մեծ արագութեամբ փոփոխութեան են ենթարկում.

՚ի նկատ առնելով, որ մշակուող հողի սակաւութեան պատճառով դարերից ի վեր անեղծ մնացած դամբանները այժմ հերկւում են, և այս պատճառով նրանք կամ կորցնում են այն նշանները, որով հնագէտները հնարաւորութիւն ունեն նրանց որոշելու և պեղելու, հետեւապէս և մնալու են գետնի տակ անյայտ, կամ բացւում են և նրանց մէջ եղած հնագիտական իրերը ընկնելով գիւղացիների ձեռքը՝ ոչնչացնւում են, կորցնում իրենց գիտական արժէքը՝

Որոշել է նախապատրաստութիւններ տեսնել մի ԱԶԳԱՅՐԱՎԱՆ-ՀՆԱԳԻՏՈՎԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ հիմնելու:

Այս նպատակով հրատարակել է մի «Ծրագիր Հայոց Ազգա-

գրական թանգարանի համար նիւթեր հաւաքելու, պատրաստել է տպագրուած և ժապաւինուած մատենաներ՝ պեղուած, գնուած և նուէր ստացուած իրերը ցուցակագրելու համար և ուղարկելով Ընկերութեան ճիւղերին՝ յանձնարարել է հիմնել թանգարանական պահեստարաններ և հաւաքել ազգագրական-հնագիտական իրեր: Մի այսպիսի պահեստարան ևս այստեղ, Թիֆլիսում, հիմնելով, Ընկերութեան Պորհուրդը յոյս ունի, որ մօտիկ ապագայում, երբ բաւականաչափ իրեր հաւաքուած կը լինին, Ազգագրական Ընկերութեան կենտրոնի և ճիւղերի ներկայացուցիչները ընդհանուր ժողով կը գումարի՝ որոշելու թէ ուր պէտք է հիմնել այդ թանգարանը, ուր և անմիջապէս կը տեղափոխուեն այդ բոլոր տեղերում հաւաքուած իրերը:

Միևնոյն ժամանակ Պորհուրդը ի նկատ առնելով ընդհանրապէս մարդարանական գիտութիւններին և մասնաւորապէս կովկասագիտութեան վերաբերեալ գրքերի անհրաժեշտութիւնը Կովկասի ուսումնասիրութեամբ պարագլոյնների համար՝ իւր ներկայ տարուայ յունուարի 4-ի նիստում որոշել է բանալ Թիֆլիսում ՄԱՐԴԱՐԱՆԱԿԱՆ-ԿՈՎԿԱՍԱՅԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ՝ օգտուելով այն հանգամանքից, որ Պորհրդի անդամ Ե. Լալայեան, այդ գիտութիւնների վերաբերութեամբ բաւական հարուստ իւր գրադարանը (մօտ 5000 բ. արժողութեան) գրել է Ընկերութեան տրամագրութեան տակ:

Գ. Ե. Լալայեանի զեկուցումից յետոյ պ. Արծրունին ցանկութիւն յայտնեց, որ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը իւր նախկին գրադարանից մնացած կովկասագիտական գրքերը նուիրէր մեր ընկերութեան Կովկասագիտական գրադարանին, քանի որ շատ աւելի յարմար է այսպիսի մի գիտական ընկերութեան պահել մասնագիտական գրադարան, քան մի բարեգործական ընկերութեան, որի անդամները ամէն խաւերից լինելով, աւելի կը ցանկային վիպական գրքերով հարուստ գրադարան ունենալ:

Ժողովականներից շատերը վկայեցին, որ յիրաւի, իւր ժամանակին առաջարկուած է եղել Բարեգործական Ընկերութեան Ընդհանուր Ժողովին՝ գրադարանը զուտ կովկասագիտական դարձնելու, սակայն ձայների ստուար մեծամասնութեամբ մերժուել է: Այս հիման վրայ ժողովը որոշեց գիմել Բարեգործական Ընկերութեան և խնդրել այդ գրքերը:

Նախագահ պ. Ա. Քալանթար ցանկութիւն յայտնեց մօտիկ ապագայում ազգագրական մի համախորհուրդ կազմակերպել, հրաւիրելով գաւառներից մարդարանական գիտութիւններով պա-

բազողներին, սակայն ժողովը որքան և համակրելի գտաւ այդ ցանկութիւնը՝ բայց և այնպէս վաղաժամ համարեց:

Ապա պ. Լալայեան յայտնեց, որ Խմբագրական Մասնաժողովը մի յատուկ նիստում քննելով պրոֆ. Մարրի դիտական գործունէութիւնը՝ եկել է այն եզրակացութեան, որ մեծարգոյ հայագէտը միանգամայն արժանի է ընտրուելու Հայոց Ազգագրական Ընկերութեան պատուաւոր անդամ: Իւր այս եզրակացութիւնը Խմբագրական Մասնաժողովը տարել է Խորհրդի ժողովին, որը նոյնպէս համամիտ գտնուելով միաձայն որոշել է՝ մի ղեկուցումով առաջարկել ընկերութեան ընդհանուր ժողովին՝ ընտրելու պրոֆ. Մարրին պատուաւոր անդամ: Այս քաղցր պարտականութիւնը իրեն, Ե. Լալայեանին, բաժին ընկած լինելով՝ սիրով կատարում է:—

Նիկողայոս Յեակովիւիչ Մարրը ծնուել է Քութայիսի նահանգի Զօխատաուրի գիւղում 1864 թուին. նրա հայրը Շոտլանդացի է եղել, իսկ մայրը՝ Գուրիացի: Սկզբնական և միջնակարգ կրթութիւնն ստացել է Քութայիսի գիմնազիայում, ուր աւարտելուց յետ մտել է Պետերբուրգի համալսարանի արեւելագիտական բաժինը: Այստեղ աւարտել է 1891 թուին և դարձել նոյնտեղի հայոց լեզուի և մատենագրութեան պրիվատ-դոցենտ: 1898 թուին մագիստրոսութեան տիտղոս է ստացել և օրդիններ պրոֆէսոր կարգուել այդ միևնոյն ամբիօնի:

Իբրև ուսուցչապետ Մարրը բացի դասախօսութիւններից, կազմել է նաև Հայոց գրաբառ լեզուի քերականութեան և ընտիր հատուածների դասագրքեր՝ ուսանելնի օգնութեամբ հայերէն գրաբառ սովորելու:

Իբրև հայագէտ և միաժամակ վրացագէտ նա Общ. единствѣ задачъ армяно-грузинской филологіи (1902 г. Тифлисъ), աշխատութեան մէջ ցոյց է տուել, որ հայոց և վրաց լեզուները միմեանց վրայ բաւական մեծ ազդեցութիւն են գործել, հետևապէս և՛ այս երկու լեզուների ուսումնասիրութեան խնդիրը միևնոյնը պիտի լինի: Յարգելի արեւելագէտը նոյն իսկ պատրաստուում է ապացուցանելու, որ թէ՛ վրաց և թէ՛ հայոց լեզուները կամ սկիզբ են առել սեմիտական ճիւղից կամ չափազանց ազդուել են դրանից:

Ապա Тексты и разысканія по армяно-грузинской филологіи վեց հատորեան աշխատութեամբ բազմաթիւ լեզուաբանական հետազօտութիւններ է կատարել:

Իբրև մատենագէտ՝ նա գրադուել է Մովսէս Խորենացու ուսումնասիրութեամբ և ցոյց է տուել, որ յամենայն դէպս մեր այս պատմահայրը V դարի մատենագիր չէ, այլ առնուադր VI կամ

VII դարի: «Армянское изслѣдованіе изъ Сирійской хроники Магрибаса» աշխատութեամբ էլ ցոյց է տուել՝ որ Մարիրաս անուամբ մի ասորի ժամանակագիր եղել է, սակայն Մ. Պորենացին օգտուել է Սերէոսի պատմութեան սկզբում գրուած Անանունի աշխատութիւնից:

Նաև ուսումնասիրել է Ս. Պետրբուրգի համալսարանի արեւելագիտական բաժնի և Սեանայ վանքի ձեռագիրները և կազմել սրանց մանրամասն ցուցակը:

Նրա գլուխ գործոցը, որ ոչ միայն մատենագրական, այլ և ազգագրական մեծ նշանակութիւն ունի, «Ժողովածոյք առական Վարդանայ» եռահատոր աշխատութիւնն է, որ մանրադնին կերպով ուսումնասիրում է միջնադարեան առակները, այն, որ հրատարակուած են «Աղուհասագիրք» խորագրով:

Ո՛չ պակաս նշանակութիւն ունի նաև Крещеніе армянъ, грузинъ, абхазовъ и алановъ св. Григоріемъ (Арабская версія Агаѳангела) աշխատութիւնը, որ Ագաթանգեղոսի արարական թարգմանութեան և բնագրի համեմատութիւնն է: Արարականի մէջ մնացել են շատ հետաքրքրական կտորներ վրացիների, արխանների և ալանների և Գրիգորի ձեռքով բրիտանականութիւն ընդունելու մասին:

Նրա սրբոց վարքագրութեան վերաբերեալ միջանի աշխատութիւնները ևս շատ հետաքրքրական են և նոյն իսկ որոշ ազգագրական նշանակութիւն ունեն. այսպէս են. Мудрость Балавара, Къ вопросу о Варлаамѣ и Іоасафѣ изъ армянской географіи, приписываемой Вардану.

Իբրև հրապարակախօս և լուրջ գիտնական նա ամենայն անաչառութեամբ ջախջախեց Աննիսկու և Ակակի Մերեթիւու շովինիստական յարձակումները, և ցոյց տուեց, որ հայոց եկեղեցին արևելիան եկեղեցիների մէջ ամենանախնական տիպն է պահել և որ վրաց միջնադարեան գրականութիւնը մեծապէս ազդուել և ծաղկել է հայոց գրականութեան ազդեցութեամբ:

Իբրև հնագէտ՝ Մարրը նախ ցանկացաւ Կովկասի բոլոր ազգերի արձանագրութիւնները հաւաքելու համար մի ընկերութիւն հիմնել, և թէպէտ յաջողութիւն չունեցաւ, որովհետև Կովկասի այդ միջոցի հասարակական-քաղաքական կեանքը մարդկանց չէր տրամադրում գիտութեամբ պարապելու, բայց և այնպէս այն օգուտը ունեցաւ՝ որ մի քանի անձնաւորութիւններ սկսեցին զբաղով զբաղուել և այժմ էլ տպագրում է այդ հրատարակութեան առաջին հատորը՝ պ. Կ. Կոստանեանի «Հայ տպագրուած արձանագրութիւնների ժողովածուն»: Յետոյ մեծարգոյ պրօֆէսորը նուիրուեց

Անիի ուսումնասիրութեան և ահա երեք տարի է, որ ամենայն անձնուիրութեամբ և մեծ յաջողութեամբ յառաջ է տանում Անիի պեղումները դժուարին զործը: Միաժամանակ Անիի մասին դասախօսութիւններ կարգադրուի ծանօթացնում է հայ ժողովրդին իւր հայրենի փառաւոր բնիկներին հետ:

Լսելով այս ղեկուցումը՝ բոլոր ժողովականները միահամուռ ծափահարութեամբ ընտրեցին մեծարդոյ Ն. Մարրին Հայոց Ազգադրական Ընկերութեան առաջին պատուաւոր անդամ:

Յետոյ ներկայացուց ընկերութեան նիւթական զրութեան հաշիւը 1906 թ. յունիսի 10—1907 թ. դեկտ. 31.

Մ Ո Ւ Ս Դ

Մնացորդ առ 10 Յունիս 1906	.	.	.	71	22
Հինգ մշտական անդամից 250 ր.	.	.	.		
Երկու » » հաշուի մնացորդ 60 ր.	.	.	.	310	—
Անդամավճարներից	.	.	.	248	—
Նուէրներ	.	.	.	300	—
Պարահանդէսի հասոյթ (18 փետր. 1907)	.	.	.	1431	96
Ազգ. Հանդէսի բաժանորդագրութիւնից	.	.	.		
և հասով վաճառումից	.	.	.	171	75
Վիճ. տոմսերի կուպոններից.	.	.	.	9	50
				զումարր րըլ	2542 43

Ե Լ Բ

Ազգազր. Հանդէսի XIII, XIV, XV և XVI զրքերի համար՝ հեղինակների վարձատրութիւն	.	.	.	682	—
Թարգմանութեան »	.	.	.	18	—
Տպագրական ծախք	.	.	.	548	54
Թղթի »	.	.	.	437	35
Սրբագրութեան »	.	.	.	168	50
Պատկերներ և այլ կլիշէների համար.	.	.	.	267	24
Թիֆլ. Առևտր. բանկին ի հաշիւ պարտքի	.	.	.	150	—
» » » տոկոսների և 2 վիճ.	.	.	.		
տոմսերի ապահովագր.	.	.	.	33	26
Լրագրական յայտարարութիւնների	.	.	.	25	40
Զանազան ծախք. (փոստի, ցրուիչի, դահլիճին և այլ մանր ծախք)	.	.	.	60	93
				2391	22
Մնացորդ 31 դեկտ. 1907 թ.	.	.	.	151	21
				զումարր	2542 43

Դրքերի հաշիւը. Ընկերութեան պատկանում է Ազգագրական Հանդիսի VII—XVI դրքերը և «Հայ աշուղներ», որոնցից տպագրուած է ընդամենը 5823 օրինակ. սրանցից գրաքննիչին տրուած է 151 օր. ընկերութեան մշտական անդամներին 362 օր. բաժանորդներին 430 օր. աշխատակիցներին նուէր 79 օր. խմբագրութիւններին 90 օր. հատով վաճառուած է 13 օր. մնում է 4708 օր. 8718 ր. 50 կ. արժողութեամբ:

Յետոյ ժողովը թոյլատրեց, որ ընկերութեան ճիւղեր բացուեն Եուշում, Ախալքալաքում և Հին-Նախիջևանում:

Ի վերջոյ տեղի ունեցան ընտրութիւններ, որ տուին հետևեալ արդիւնքը. Պորհրդի անդամներ՝ Տ. Ն. Նունուֆարեանի և պ. պ. Ե. Մատուրեանի, Յ. Տէր-Դաւթեանի և մի փոխանդամի տեղ ընտրուեցան Տ. Տ. Յովհաննիսեան, Մ. Ղարաջեան, Ն. Դոլուխանեան և պ. Բարսամեան: Խմբագրական Մասնաժողովի անդամներ՝ պ. պ. Յ. Մանանդեան, Լ. Բարայեան, Խ. Սամուէլեան, Մ. Յովհաննիսեան և մի փոխանդամի տեղ պ. պ. Ս. Տէր-Աւետիքեան, Ս. Յակոբեան, Ս. Բալաղեան, Կ. Գիւտ ա. ք. Աղանեան և Ի. Յարութիւնեան: Վերաստուգիչ Մասնաժողովի անդամներ՝ Ս. Խարաղեան, Կ. Երրինեան և Զ. Մամուլեան:

Ազգագրական-Հնագիտական Թանգարանի համար նուէր է ստացուած Տ. Եուշանիկ Յովհաննիսեանից Եամախեցի հայ կնոջ տեղական զգեստը, որի համար Պորհուրդը որոշեց շնորհակալութիւն յայտնել:

Մարգարանական-Կովկասագիտական գրադարանի համար նուէրներ ստացուեցան հետևեալ անձերից, որոնց Պորհուրդը որոշեց շնորհակալութիւն յայտնել.—

Պ. Հմայեակ Վահանեանից. էրնեստ Եանտրի՝ Recherches anthropologiques dans le Caucase, 5 հատոր. Missions scientifiques en Transcaucasie, և Premier âge du fer և հինգ բրոշիւրներ:

Տիկին Դարիա Յովհաննիսեանից՝ իւր հանգուցեալ ամուսնու, յայտնի հասարակական գործիչ և խմբագիր Ազգար Յովհաննիսեանի բոլոր աշխատութիւններն ու հրատարակութիւնները՝ Վորձ, Արձաղանք, Armenische bibliotek, Հանդէս հայագիտութեան, ինչպէս նաև Կովկաս 1847 թ. Ետեմարան պիտանի գիտելիաց (1843—47), Մեղու Հայաստանի, Սիոն, հայերէն հին ատլասներ և այլն:

Պ. Համբարձում Կարապետեանից էլ՝ 65 կտոր զանազան գրքեր:

Խորհրդի խնդրի համաձայն Խմբագրական Մասնաժողովի փոխ-նախագահ պ. Ա. Եղեկեան ներկայ գտնուեց Հայոց Թատրոնի յիսնամեայ յորելանական հանդիսին (դեկտ. 25) և ընկերութեան կողմից շնորհաւորեց:

Խորհրդի խնդրի համաձայն, նախագահ պ. Ա. Մելիք-Ազարեան ներկայ գտնուեց Կովկասի փոխարքայ Ն. Պ. Վարանցով-Դաշկովի զինուորական ծառայութեան յիսնամեայ յորելանական հանդիսին (մարտի 25-ին) և ընկերութեան կողմից շնորհաւորեց:

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացել է.

Ա. Զուպանեան Քերթուածներ. Փարիզ, 1908 թ. գին 5 ֆ.

Բժ. Ս. Շահ-Նազարեան.—Բանաստեղծ-Քաղաքացին նուիրական ուխտի ասպարէզում. Մոսկուա, 1908 թ. գինն է 10 կ.

—Ս. Մանգինեանը իբր տեսուչ երեանի Հայոց թեմական դպրանոցի. Մոսկուա, 1908 դ. 50 կ.

Երուանդ վարդապետ Տէր-Մինասեան, ընդհանուր եկեղեցական պատմութիւն. հ. 1. Հին եկեղեցին. էջմիածին. 1908 դ. 1 ր.

Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանի.—Էջանապարհորդական տպաւորութիւնք և համառօտ նկարագիր դէպքերի վերջին կաթողիկոսական ընտրութեան ժամանակ էջմիածին. դ. 40 կ.

Н. Марръ: Основные таблицы къ грамматикѣ древне-грузинскаго языка съ предварительнымъ сообщеніемъ о родствѣ грузинскаго языка съ семитическимъ.

Ազգագրական Հանդէսի մէջ տպագրուող Ե. Լալայեանի Նոր-Բայազէտի գաւառ աշխատութիւնը արժանացաւ այս տարուայ Ղուկասեան մրցանակարաջխութեան:

